ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
**WESTERN PRELACY**
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**
Tel: **818-248-7737/8**, Fax: **818-248-7745**, E-mail: **Prelacy@aol.com**




## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ԱԶԴԱԿ»Ի ՏՆՕՐԷՆ ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆԸ

Լոս Անճելըս իր կարճատեւ այցելութեան առիթով, Պէյրութի «Ազդակ» օրաթերթի տնօրէն Տիար Շահան Գանտահարեան Երեքշաբթի, 18 Դեկտեմբերի կէսօրին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Հիւր խմբագիրը ծանօթացաւ Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին ու անոր յարկին տակ տարուող աշխատանքներու ծիրին, ապա իր կարգին որոշ ծանօթութիւններ տուաւ ընդհանրապէս Լիբանանի իրավիճակին ու յատկապէս »Ազդակ«ի աշխատանքներուն մասին: Առաջնորդ Սրբազանը բարի կեցութիւն մաղթեց Տիար Շ. Գանտահարեանի ու յաջողութիւն ցանկաց մամուլի ճամբով անոր առաքելութեան:

## PRELATE WELCOMES EDITOR OF “AZTAG” DAILY SHAHAN KANDAHARIAN TO THE PRELACY

On Tuesday, December 18th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed editor of Beirut’s Aztag Daily Mr. Shahan Kandaharian to the Prelacy. Mr. Kandaharian is currently on a brief visit to Los Angeles.

The Prelate familiarized the editor with the Prelacy headquarters and the activities carried out by the various departments. Mr. Kandaharian, in turn, reported on the current situation in Lebanon and specifically on Aztag’s undertakings. The meeting concluded with the Prelate wishing Mr. Kandaharian success in his endeavors.